

որ դուն պիտի շահես :

18. Ութը տարեկան մանուկ իշխան մի շատ քաղաքավար ու շատ խելացի ըլլալով, օրին մէկը ամբողջ ընկերութիւն մի կը զարմանար : ( ) Եր քաղաքացի մի անոր տրուած գովեստները լսելով, բաւական բարձր ձայնով մի ըսաւ , այն տղաքները որ իրենց պղտրկութեան ատենը շատ խելացի կ'ըլլան , մեծցած ատենին քիչ խելք կուենեան : Սանուկ իշխանը զայս լսելով անոր նոյն եղանակաւ պատասխան առաւ , պարոն քաղաքացի կը կարծուի թէ ձեր մանկութեան ատենը խիստ խելացի էք եղեր :

19. Փարիզի նոր կամուրջը լմնաւ լու միջոցները վերակացունները տեսան որ մարդ մի առանց մէկու մը բան մի ըսելու կամուրջը չափելու կղբաղէր , այս մարդը ճարտարապետ կարծելով իրենց հետ ճաշելու հրաւիրեցին , կերակուրէն վերջը աղաչեցին որ իւր կարծիքը իրենց հաղորդէ , որոնք անշուշտ կրնային կատարելագործել իրենց գործը : Բաւ անոնց , ես կրմտածեմ որ շատ խելացի եղած պիտի ըլլաք , որ այս կամուրջը գէպի լայնքը շիներ էք , որովհետեւ եթէ երկայնութեան կողմէն բռնելու ըլլայիք , երբէք չէիք կրնար գլուխ հանել :

20. Սըրբողանոցի դերձակ մի , որ գերեզմանատան կից եղող քաղաքին դրան քով կը բնակէր , իւր խանութին մէջ բեւեռէ մի կախուած հողէ աման

մի ունենալով , որքան որ մեռեալ կը տանէին թաղելու , այն անօթին մէջ պղտիկ քայլախաղ քար մի կը ձգէր , եւ ամէն ամառգլխայն վերջը մեռելոց թիւը հասկնալու համար քայլախաղները կը համրէր . վերջապէս ինքնալ մեռաւ , քանի մի ժամանակէ վերջոսունք չը գիտնալով անոր մեռնիլը , և խանութը քոց տեսնելով , հարցուցին թէ ինչ եղած էր դերձակը : Ղրայիկներէն մէկը պատասխան տուաւ թէ՛ դերձակն ալ միւսներուն պէս անօթայն մէջ ընկաւ :

21. Կասկնացի աղքատ մի որ ամառուան թեթեւ զգեստէն ուրիշ բան չուներ , ձմեռուան մէջ կը չորջէր Փարիզի Ղոր կամուրջին վրայ , թաքաւորը որ կ'առքով կանցներ այնպիսի վիճակի մէջ տեսնելով շատ զարմացաւ . կանչել առաւ և ըսաւ անոր . բարեկամ ինչո՞ւ համար թեթեւ զգեստով կը ըլլիս այսօր որ ասանկ սաստիկ ցուրտ է , որ ես ալ հազիւ կրնամ գիմանալ , թէպէտ և պատուական մուշտակ մը ալ հագած եմ : Պատասխան տուաւ աղքատը , տէր արքայ , եթէ շեր վեհափառութիւնը ինձի պէս ընելու ըլլայ , ամենեւին ցուրտ չը պիտի զգայի կրկնեց թագաւորը , ուրեմն դու ինչ կրնես : Պատասխանեց կասկնացին , տէր արքայ , բոլոր ունեցած զգեստներս վրաս կը կրեմ :

( Երբանայի )

Տպագրական վրիպակներ

Ն Ա Խ Ը Ն Թ Ա Յ Թ Ի Ի

Երես	Սիւսլ	Ռոպիդ
60	30000	3000
70	վարդապետներ	վարժապետներ
71	հաւաստի ենք	հեռատես ենք